ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 հունվարի հինգշաբթի 2024
տպագրության ԺԳ տարի

7
(2857)

100 դրամ

քաղաք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՏԿԵՆ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԻ ԱՀՌԵԼԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

ՀՈՎՀԱՆԵՍԻ	Այլ եկամուտներ	Կոնվերս բանկ	Պաշտպանված	Պաշտպանված	դ 442,825.8	դ 0
ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ ՀՈՎՀԱՆԵՍԻ	Աշխատանքի վարձատրություն և/կամ դրան հավասարեցված այլ վճարումներ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	Պաշտպանված	Պաշտպանված	դ 13,104,115	դ 0
ԱՐՄԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ ՀՈՎՀԱՆԵՍԻ	Աշխատանքի վարձատրություն և/կամ դրան հավասարեցված այլ վճարումներ	ՏՐԱՍԵԿԱ Միջկառավարական հանձնաժողով	Պաշտպանված	Պաշտպանված	€ 31,200	€ 0
ընդամենը					դ 64,446,525.48	դ 0

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի երիտասարդ տեղակալ Արմեն Սիմոնյանը, որ պաշտոնի նշանակվել է 2019 թվականին, բացի փոխնախարարի վարձատրությունից, 2022 թվականին ստացել է 15 հազար 600 եվրո եւ 2020-ին ստացել է 31 հազար 200 եվրո վարձատրություն:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձել է հասկանալ՝ ինչ աղբյուրից է փոխնախարարը եկամուտ ստացել:

Հեղափոխական թիմի կողմից նշանակված երիտասարդ փոխնախարարը, ում կենսագրական տվյալներում միայն կրթության մասին է նշված, հասցրել է մեծ ունեցվածք կուտակել, մասնավորապես՝ նրա բանկային ավանդները տարեսկզբին կազմել են 5 մլն 900 հազար դրամ, տարեվերջին դրանք զրոյացել են: Նրա բանկային հաշիվների մնացորդները կազմել են 6 հազար եվրո եւ 686 հազար դրամ: Կանխիկ դրամական միջոցները կազմել են 400 դոլար, 800 հազար ՀՀ դրամ, 8 հազար եվրո եւ 1 մլն 200 հազար ռուբլի: Նախարար Գնել Սանոսյանի տեղակալ Սիմոնյանն ունի եկամտի հիմնական 2 աղբյուր, երկուսն էլ աշխատանքի վարձատրություն է ՀՀ ՏԿԵ նախարարությունից՝ 14 մլն 426 հազար դրամ, եւ «ՏՐԱՍԵԿԱ»-ից՝ 15 հազար 600 եվրո:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց տեղեկանալ, թե փոխնախարարը «ՏՐԱՍԵԿԱ»-ում ինչ գործառույթներ ունի, որի համար ստանում է աշխատանքի վարձատրություն: Ի պատասխան՝ ՏԿԵ նախարարությունից մեզ պատասխանեցին.

«Արմեն Սիմոնյանը հանդիսանում է «ՏՐԱՍԵԿԱ» միջկառավարական հանձնաժողովի ազգային քարտուղարը, եւ դա ենթադրում է նաեւ վարձատրություն: Իսկ դա բխում է ՀՀ կողմից վավերացված «Եվրոպա-Կովկաս-Ասիա միջանցքի զարգացմանն ուղղված միջազգային տրանսպորտի մասին հիմնական բազմակողմ համաձայնագրի կողմերի կառավարությունների միջեւ «ՏՐԱՍԵԿԱ» միջկառավարական հանձնաժողովի մշտական քարտուղարության (ՏՐԱՍԵԿԱ ՄՀ ՄՔ) համատեղ ֆինանսավորման մասին» համաձայնագրի 3-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներից:

«ՏՐԱՍԵԿԱ» միջկառավարական հանձնաժողովի բյուջեն ձեւավորվում է անդամ-երկրների անդամավճարներից եւ հաստատվում է ամեն տարվա համար: ՀՀ վարչապետի՝ 2019 թվականի սեպտեմբերի 16-ի 1311-Ա որոշմամբ՝ Արմեն Սիմոնյանը նշանակվել է «ՏՐԱՍԵԿԱ» միջանցքի զարգացման հանձնաժողովի քարտուղար»:

Միջկառավարական հանձնաժողովից Սիմոնյանը 2020 թվականին եւս ստացել է գումար՝ աշխատանքի վարձատրություն, սակայն այս դեպքում այն կազմել է 31 հազար 200 եվրո:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Հակակոռուպցիոն դատարան է հրավիրվել եւ հարցաքննվել Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով դատավոր Լիպարիտ Մելիքջանյանը: Նա հարցաքննվել է որպես վկա ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանի դեմ հարուցված քրեական գործով: Նշենք, որ Մելիքջանյանը Նախկին ԲԴԽ անդամ է եղել: Ռուբեն Վարդազարյանը մեղադրվում է արդարադատության իրականացմանը խոչընդոտելու համար: Վերջինս, ըստ մեղադրանքի, 2019թ. հուլիսի 19-ից զբաղեցնելով ԲԴԽ նախագահի պաշտոնը, հանդիսանալով դատական իշխանության մարմնի ղեկավար աշխատող, միջամտել է Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Անդրանիկ Սիմոնյանի կողմից արդարադատության իրականացմանը: Ըստ Սիմոնյանի հաղորդման՝ Վարդազարյանը «ալավերդցի Վահագն» անունով հայտնի Վահագն Աբգարյանի գործով է իրեն դիմել: Վահագն Աբգարյանը մեղադրվում է Ալավերդու բնակիչ Կամո Փիրուզյանի սպանությունը կազմակերպելու, ինչպես նաեւ սպանության գործով իր օգտին գործողություններ կատարելու համար կաշառք տալու համար: Գործում առկա է նաեւ ձայնագրություն. վերջինս, ըստ մեղադրանքի, Signal հավելվածի միջոցով կապ է հաստատել Անդրանիկ Սիմոնյանի հետ եւ համոզելու, խնդրանքի եղանակով վերջինիցս պահանջել փոխել Աբգարյանի խափանման միջոցը՝ կալանավորումը: Վարդազարյանն իրեն առաջադրված մեղադրանքը չի ընդունում:

Քաղաքական իշխանությունները դատական համակարգում փնտրտուքները շարունակում են. ՍԴ դատավոր անդամի թափուր տեղի համար իրենց ցանկալի թեկնածուին են փնտրում, սակայն դատելով իրավիճակից՝ ոչ բոլոր դատավորներն են ցանկանում գնալ ՍԴ: Ինչպես հայտնի է, Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանը հրաժարական տվեց, եւ ԱԺ-ն, հիմք ընդունելով հրաժարականի մասին դիմումը եւ առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 147-րդ հոդվածի 2-րդ մասով, 2024 թվականի հունվարի 4-ից դադարած համարեց Սահմանադրական դատարանի դատավոր Արայիկ Թունյանի լիազորությունները: Նշենք, որ Թունյանն ընտրվել է Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավոր եւ այդ պատճառով հրաժարական տվեց ՍԴ դատավորի պաշտոնից: Իսկ ո՞վ պետք է զբաղեցնի Թունյանի տեղը: Դատական համակարգից մեզ հասած լուրերի համաձայն՝ գնդակը դատավորների դաշտում է, եւ Դատավորների ընդհանուր ժողովը Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածու պետք է ներկայացնի, ու դատավորները ընտրեն նրան, ապա՝ գործուղեն ԱԺ: Դատավորների ժողովը կայանալու է փետրվարի 2-ին:

Օղակաձեւ զբոսայգու 4-րդ հատվածում գտնվող թենիսի կորտերի տարածքի ապագան դեռ անորոշ է: Վերջերս մեծ աղմուկ բարձրացրեց քաղաքապետարանի հերթական որոշումը՝ Օղակաձեւ զբոսայգու 4-րդ հատվածում գտնվող սրճարանները, ժամանցի վայրերը, այդ թվում՝ «Արարատ» ակումբին պատկանող թենիսի կորտերը քանդելու վերաբերյալ: Factor.am լրատվականը բացահայտել էր, որ թենիսի կորտերի տարածքը տրվելու է Երեւանին 254 մլն դրամ նվիրաբերած Evocabank-ի բաժնետիրոջը՝ Մարետա Գեւորկյանին. վերջինս նաեւ հանդիսանում է «GreenRock Management Group» ընկերության սեփականատերը: Եվ հենց «GreenRock Management Group» ընկերությունն էլ դիմել է քաղաքապետարան՝ տարածքը իրենց տրամադրելու համար: Այսինքն՝ մի ընկերությունից, որը սպորտային նպատակով այգու տարածքը զբաղեցրել է, վերցնում է իշխանությունը եւ տալիս մեկ այլ գործարարի, որը քաղաքին գումար է տվել: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց «GreenRock Management Group» կազմակերպություն՝ պարզելու, թե ինչ նպատակով է տարածքը օգտագործվելու: Կազմակերպությունից մեզ պարզաբանեցին, որ նախագիծը դեռ քաղաքապետարանում է, վերջնական որոշում դեռ չկա, այսինքն՝ գործարքը դեռ չի ավարտվել: Իսկ կազմակերպությունն այս ընթացքում հետազոտություն է իրականացնում՝ պարզելու, թե քաղաքացիները թենիսի կորտերի տարածքում ինչ կցանկանային տեսնել: Ըստ այդ հետազոտությունների արդյունքների՝ գործարքի ամբողջական ավարտից հետո կորոշվի՝ ինչ է կառուցվելու թենիսի կորտերի տարածքում: Այսինքն՝ տարածքը վերցրել է ընկերությունը, բայց դեռ չգիտի՝ ինչ է ուզում կառուցել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ բարձրացած այս մեծ աղմուկից եւ քաղաքացիների շրջանում առաջացած դժգոհություններից հետո ակտիվիստների մի խումբ մտադիր է ընդհուպ բոյկոտ հայտարարել Evocabank-ին:

ԶՐՈՒՅՑ

«ԱՆԴԵՄ, ԱՆՍԵՌ, ԲԱՅՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂ ԶԱՆԳՎԱԾ»

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը «Քարգավաճ Հայաստան» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ, քաղաքական վերլուծաբան Արման Աբովյանն է:

-Պարոն Աբովյան, Նիկոլ Փաշինյանը վերջերս մի ուշագրավ հայտարարություն արեց՝ ասելով, որ Հայաստանը կարիք ունի նոր Սահմանադրության, ընդ որում՝ անհրաժեշտ է ոչ թե փոփոխել գործող Սահմանադրությունը, այլ ամբողջովին նոր Սահմանադրություն գրել Հայաստանի համար: Ո՞րն է իրական նպատակը Նիկոլ Փաշինյանի, ինչո՞ւ գործող Սահմանադրությունը հանկարծ սկսեց խանգարել նրան:

-Սա Նիկոլ Փաշինյանի որոշումը չէ, սա, ըստ էության, թուրք-ադրբեջանական տանդեմի վերջնագրերի կատարումն է: Հիշեցնեմ Ձեզ, որ 2021 թվականի աշնանը թուրք-ադրբեջանական տանդեմի առաջնորդներից մեկը, Անդրկովկասյան թաթարների լիդեր Իհլամ Ալիեւը պահանջ ներկայացրեց, որ ՀՀ-ն պետք է փոխի Սահմանադրությունը, այսինքն՝ Հայաստանը պետք է հրաժարվի իր ինքնությունից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս իշխանության գործելաոճի կոնցեպտի մեջ մտնում է մաքսիմալ բավարարել թուրքերի եւ ադրբեջանցիների պահանջները՝ դիմացը ակնկալելով ինչ-որ դրական քայլեր, ապա այս զարգացման մասին մենք խոսել ենք 2020 թվականից հետո, եւ այստեղ մենք ունենք պարզ իրողություն, որ ինչ էլ մեզ պատմեն, որ Սահմանադրությունը փոխելուց հետո կգա բաղձալի խաղաղությունը, որով արդեն հոգնեցրել են մարդկանց, եւ որի մասին միջազգային ատյաններում, բացի բարձր ծիծաղից, էլ ոչ մի բան չի առաջացնում, այդ մեխանիզմները կիրառվելու են: Ասեմ ավելին՝ մենք մի պարադոքսալ իրավիճակ ունենք. այն փաստաթուղթը ինքնաոչնչացման, որը սրանք անվանում են Կադաստրի թուղթ, այն դրույթները, որոնք այս իշխանությունը փորձում է որպես նարատիվներ ներկայացնել, հակասում են Սահմանադրությանը եւ հակասում են Անկախության հռչակագրին: Երեկ Ադրբեջանի դեսպանը Գերմանիայում հայտարարություն է արել, համաձայն որի՝ Հայաստանի Սահմանադրությունը պետք է փոխվի, որովհետեւ այնտեղ կան տարածքային պահանջներ, ինչն ակնհայտ սուտ է:

-Այսինքն՝ Դուք համոզմունք ունեք, որ եթե ի կատար ածվի Սահմանադրության նախատեսվող փոփոխությունը, մայր օրենքից կհանվի՞ Արցախի ու Ցեղասպանության մասին ցանկացած դրույթ, թեեւ իշխանությունները հերքում են դա:

-Ստիպված եմ հիշեցնել իշխանությանը, թե ինչ համառությամբ էին նրանք հերքում թեզեր, եւ ի վերջո ամեն ինչ եկավ կանգնեց այնտեղ, որտեղ կանգնել է: Այսինքն՝ իրենց խոսքերին մենք ուշադրություն չպետք է դարձնենք: Ցավոք, իշխանությունն իր արտաքին ճակատում ամբարտավան քաղաքականությամբ բերել է այն վիճակին, որ իրենք բան չեն որոշում: Այո՛, իրենք հանելու են: Մեզ փորձում են համոզել, որ մեր սարը Արարատը չէ, Արագածն է:

-Նոր Սահմանադրության փոփոխությունը պետք է հանրաքվեի միջոցով իրականացվի: Ո՞նց են հասնելու դրան:

-Իրենք երկու մեխանիզմ են օգտագործելու՝ առաջինը՝ վախերի գեներացում, այսինքն՝ ասելու են՝ կա՛մ մենք սա անելու ենք, կա՛մ լինելու է պատերազմ, եւ մշտապես մեզ սպառնալու են, այնինչ հակառակ պրոցեսն է. Սահմանադրությունը այսօրվա տեսքով իդեալական չէ, բայց այն թեզերը, որոնք սրանք ուզում են հանել, կանխարգելիչ անվտանգային մեխանիզմներ են մեզ բոլորիս համար: Երկրորդը՝ մեխանիզմը իրենք նաեւ կիրառելու են խաղաղության իրենց տեսլականի պահով: Ենթադրվելու է, որ նույնիսկ նշույլները ազգային ինքնության պետք է հանեն. մեզ առաջարկելու են ազգային ինքնությունից հրաժարվել Սահմանադրության մակարդակով. մոռանում ենք, որ մենք հայ ենք, մենք դառնում ենք անդեմ, անսեռ, անիմաստ, բայց հարկ վճարող մի զանգված, այսինքն՝ մեր կյանքի նպատակը եւ մեր հայրենասիրությունը եզրափակվելու է, թե մենք ինչքան փող ենք տալիս պետությանը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԲՀԿ ԵՐԻՏԹԵՎԸ՝ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՈՎ

«Քարգավաճ Հայաստան» կուսակցության ուսանողական խորհրդի անդամները օրեր առաջ հանդիպել են Արցախի տարբեր կուսակցությունների երիտթեւերի եւ ՀԿ-ների ղեկավարների, Արցախի տարբեր բուհերի ուսանողական խորհուրդների նախագահների հետ: Հանդիպմանը մասնակցել է նաեւ ԲՀԿ աշխատակազմի ղեկավար Իվետա Տոնոյանը, որը ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի անունից նախ ողջունել է Արցախի երիտասարդներին, հույս հայտնել, որ Արցախում մշտապես քաղաքացիական ակտիվ դիրքորոշում արտահայտած եւ պետականամետ մտածելակերպ ունեցող երիտասարդները Հայաստանում եւս իրենց ուրույն դերակատարումն են ունենալու պետականաշինության գործընթացում. այս մասին հայտում են «Քարգավաճ Հայաստան» կուսակցության ֆեսբուքյան էջում:

ԲՀԿ ուսանողական խորհրդի նախագահ Լիաննա Մանուկյանը պատրաստակամություն է հայտնել Արցախի երիտասարդներին ներգրավել բոլոր այն նախաձեռնություններում, որոնք միտված են երիտասարդությանը հուզող խնդիրների վերհանմանը եւ դրանց լուծման ուղիների նախանշմանը:

Արցախի երիտասարդները նախ խնդրել են ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանին փոխանցել իրենց գնահատանքի խոսքերը՝ Արցախի շրջափակման ամիսների ընթացքում ցուցաբերված համակողմանի եւ կարեւոր աջակցության համար՝ նշելով, որ Արցախի մեր հայրենակիցները շատ բարձր են գնահատում հատկապես դժվարին այդ ժամանակահատվածում իրենց կողքին գտնվելու հանգամանքը:

Երիտասարդները նաեւ բարձր են գնահատել Գագիկ Ծառուկյանի կողմից Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցներին տրամադրվող խոշորածավալ սոցիալական աջակցության ծրագրերը:

Հանդիպման ընթացքում երիտասարդները անդրադարձել են Արցախի երիտասարդների զբաղվածության, բնակարանային ապահովման, կրթության շարունակականության վերաբերյալ հարցերին ու մտահոգություններին: Քննարկվել է համատեղ ուժերով Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների համար անվճար իրավաբանական եւ հոգեբանական խորհրդատվության տրամադրմանն ուղղված միջոցառումների անցկացման անհրաժեշտության վերաբերյալ հարցը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակական հանդիպումների ընթացքում հստակեցնել իրականացվելիք միջոցառումների ուղղություններն ու ժամանակացույցը: Հանդիպման ավարտին Արցախի երիտասարդները շրջայց են կատարել Երեւանի Արարատ կոնյակի, գինու, օղու կոմբինատում, ծանոթացել հայկական կոնյակագործության հարուստ ավանդույթներին:

ՉՎԱՎԵՐԱՑՐԵՑ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Որպեսզի առաջ ԵԽԽՎ-ն քվեարկությամբ որոշեց չվավերացնել Ադրբեջանի պատվիրակության լիազորությունները:

Այս որոշմամբ Ադրբեջանի պատվիրակությունն առնվազն 1 տարով հեռացվեց ԵԽԽՎ-ից եւ այդ ընթացքում կարող է վերադառնալ միայն իր կանոնակարգային պարտավորությունները կատարելու դեպքում:

Ընդունված բանաձեւում Վեհաժողովը վկայակոչում է 2023 թվականի հունիսին ընդունած «Լաչինի միջանցքով ազատ եւ անվտանգ մուտքի ապահովումը» բանաձեւը, որում Վեհաժողովը հաստատել է Լաչինի միջանցքով ազատ եւ անվտանգ երթեւեկության բացակայությունը՝ ցնցվելով այն փաստից, որ Ադրբեջանի ղեկավարությունը չի ճանաչել շուրջ տասը ամիս ձգված իրավիճակից բխող լուրջ հումանիտար եւ մարդու իրավունքների հետեւանքները: Վեհաժողովը խորը ափսոսանք է հայտնում, որ փաստահավաք առաքելության շրջանակներում Լաչինի միջանցքի հարցով ԵԽԽՎ զեկուցողը հնարավորություն չի ունեցել մեկնել Լաչինի միջանցք:

Վեհաժողովը հիշատակում է նաեւ 2023 թվականի հոկտեմբերին ընդունած «Հումանիտար իրավիճակը Լեռնային Ղարաբաղում» բանաձեւը, որով ԵԽԽՎ-ն դատապարտել է 2023 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի ռազմական գործողությունները, ինչը հանգեցրել է Լեռնային Ղարաբաղի ողջ հայ բնակչության փախուստին Հայաստան՝ հարուցելով էթնիկ զտումների կասկածներ: Հենց այս բանաձեւում էր Վեհաժողովն ընդգծել, որ Ադրբեջանի՝ իր կանոնադրական պարտավորությունների չկատարման մասով իրավիճակի փոփոխության բացակայության դեպքում հունվարին չի վավերացնի ադրբեջանական պատվիրակության լիազորությունները:

Խորհրդարանական վեհաժողովը նշում է, որ Եվրոպայի խորհրդին միանալուց ավելի քան 20 տարի անց Ադրբեջանը չի կատարել կազմակերպության անդամակցությունից բխող հիմնական պարտավորությունները: Լուրջ մտահոգություններ կան Ադրբեջանում ազատ եւ արդար ընտրություններ անցկացնելու կարողության, իշխանությունների բաժանման, գործադիրի համեմատ օրենսդիր իշխանության թուլության, դատական իշխանության անկախության եւ մարդու իրավունքների պաշտպանության առնչությամբ:

Վեհաժողովը խիստ ափսոսում է, որ չի հրավիրվել հետեւելու գալիք նախագահական ընտրություններին՝ չնայած Ադրբեջանն ունի հրավերը ուղարկելու պարտավորություն՝ որպես մոնիտորինգի ենթակա երկիր: Վեհաժողովը մտահոգված է նաեւ, որ Մոնիտորինգային կոմիտեի համազեկուցողներին թույլ չի տրվել հանդիպել քաղաքական դրդապատճառներով մեղադրվող կամ ձերբակալված անձանց հետ:

ԱՎԻԱՑԻՈՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱՆՔ

Համացանցում լուրեր են տարածվել, ըստ որոնց՝ Վանաձոր քաղաքում լսվել են պայթյունին նմանվող ձայներ:

Անհանգստացած քաղաքացիները փորձում են հասկանալ՝ ինչ է կատարվել: Ոմանց խոսքով՝ պայթել է գազալցակայան, ոմանք ձայնը նմանեցրել են օդանավի ընկնելուն:

Վանաձոր համայնքի ղեկավար Արկադի Փելեշյանը հայտնեց, որ ընդամենը լսել են ուժեղ ձայն:

«Ընդամենը ձայն է լսվել, ոչինչ չկա այս պահի դրությամբ, Վանաձորում այս պահին շատ հանգիստ է: Ինքնաթիռի ձայնն էլ է լսվել եւ ուժեղ կրակոցի ձայն, բայց ոչինչ չկա, չենք տեսել: Համայնքում ամեն տեղ հարցրել ենք, ոչինչ չի եղել, կոտրված ապակիներ չենք տեսել. հիմա փնտրում ենք, թե որտեղից է եղել ձայնը»,- ասաց նա:

Ներքին գործերի նախարարությունից էլ մեզ հայտնեցին, որ ստացել են պայթյունի ձայնի վերաբերյալ ահազանգ, սակայն դեպքի վայր չի հայտնաբերվել:

Լոռու մարզպետի աշխատակազմից հայտնել են, որ տեղի է ունեցել ավիացիոն ուսումնավարժանք՝ հորդորելով խուճապի չմատնվել:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԻՄԱԴՐՈՒԹՅԱՄԲ

«Ցանկացած փոփոխություն, որ իրականացվում է, մշտապես ունենում է դիմադրություն, ու մշտապես լինում են մարդիկ, ովքեր հակափաստարկներ են ունենում»,- լրագրողների հետ զրույցում, անդրադառնալով «Հայոց պատմություն» առարկայի անվանումը «Հայաստանի պատմություն»-ով փոխարինելու նախաձեռնությանը, ասաց ԿԳՄՍ փոխնախարար Արաքսիա Սվաջյանը:

«Բայց կարեւոր է կշռադատել, հասկանալ հիմնավորվածությունը ու ըստ այդմ շարժվել առաջ: Որեւէ մեկը չի խոսել այն մասին, որ մենք ուսումնասիրելու ենք հայ ժողովրդի պատմությունը ինչ-որ ինտերվալներով կամ միջակայքերով: Եթե մենք խոսում ենք մեր երկրի, մեր ժողովրդի, մեր մշակույթի, կրոնի մասին, ապա դպրոցում ուսումնասիրվելու է ողջ ժամանակագրությունը:

Բնականաբար, այն փուլերը, երբ մենք պետականություն չենք ունեցել, չենք կարող բաց թողնել: Ոչ ոք չի խոսում այն մասին, որ այս կամ այն պատմական դրվագը չի ուսումնասիրվելու: Մենք շատ ենք կարեւորում, որ դպրոցներում երեխաների մեջ սերմանվեն ակտիվ քաղաքացի դառնալու, իրենց երկրի զարգացմանը միտված իրենց դերը կարեւորելու, իրենց կրթությունը արժանապատիվ ստանալու հարցերը»,- ասաց փոխնախարարը:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

ՏԱՌԱՊՈՒՄ ԵՆ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՉՔԻ ԱՌԱՋ

Եվրոպական խորհրդարանում կանցկացվի Լեռնային Ղարաբաղի մշակութային եւ կրոնական ժառանգությունը պահպանելու թեմայով քննարկում:

«Պահպանել Լեռնային Ղարաբաղի մշակութային եւ կրոնական ժառանգությունը» խորագրով համագումարին ընդառաջ կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Եվրոպական խորհրդարանի սլովակ պատգամավոր Միրիամ Լեքսմանը հայտարարել է, որ բռնի տեղահանված արցախցիները տառապում են մարդկության աչքի առաջ, հայկական ինքնատիպ մշակութային ու կրոնական ժառանգությունը ոչնչացվում է, իսկ Ադրբեջանի այդ քայլն անպատիժ է մնում:

«Քրիստոնեական եւ հրեական մշակույթն Արեւմտյան քաղաքակրթության հենասյունն են, եւ մենք պետք է պետք է դա պահպանենք ոչ միայն խոսքով, այլ գործով: Այո, ԵՄ-ն այսօր գազի կարիք ունի, որի համար պայմանագիր է ստորագրել Ադրբեջանի հետ, բայց մենք իրավունք չունենք կասկածի տակ դնել կամ անտեսել ԵՄ-ի արժեհամակարգը», - նշել է Լիքսմանը:

Համագումարի բանախոս, Բելգիայի թագավորությունում Հայաստանի դեսպան եւ ԵՄ-ում Հայաստանի մշտական ներկայացուցիչ Տիգրան Բալայանն իր խոսքում հիշեցրել է, որ Ադրբեջանի կողմից հայկական մշակութային ժառանգության պարբերական ոչնչացումը սկիզբ է առել դեռեւս 2005-ին, երբ Նախիջեւանում ոչնչացվեցին հազարավոր հայկական խաչքարեր:

«Մենք հասել ենք այս կետին, քանի որ դա կանխելու համար ոչինչ չի արվում», - ասել է Բալայանը:

Լյուվենի համալսարանի պրոֆեսոր, Միջազգային իրավունքի ինստիտուտի անդամ, Արդարադատության միջազգային դատարանում ԼՂ պատմամշակութային ժառանգության հարցերով ներկայացուցիչ Պիեր Դը Արժանը իր խոսքում ընդգծել է, որ Ադրբեջանը հերքում է հայկական մշակութային ժառանգության գոյությունը եւ զբաղված է իրականությունը խեղաթյուրելով: «Լեռնային Ղարաբաղի մշակութային ժառանգությունը կենդանի է, ապրող է, եւ այն կարող է գոյություն ունենալ, եթե արցախահայությունն այն ապրեցնում է»,- նշել է նա:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քարոզչական կենտրոնի տնօրեն եւ Լեռնային Ղարաբաղի հոգեւոր-մշակութային ժառանգության հարցերով գրասենյակի վարիչ, Հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը, շարունակելով Պիեր Դը Արժանի միտքը, վերահաստատել է, որ մշակութային ժառանգությունը միայն եկեղեցիներն ու հուշակոթողները չեն: «Մշակույթը կապրի, եթե արցախցիները կարողանան հաճախել իրենց աղոթատեղիներ եւ պահպանել իրենց կրոնական եւ ազգային ավանդույթները»,- ասել է նա:

Մշակութային ժառանգության մասնագետ Արմինե Տիգրանյանը նշել է, որ երբ խոսում են մշակութային ժառանգության մասին, պետք է գիտակցել, որ առաջին տեղում մարդիկ են, եւ այն փաստը, որ այսօր նրանք զրկված են համայնքային կյանքից, ծանր հարված է հասցնում նրանց ինքնության շարունակականությանը:

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ՍԱՅԼԸ ՏԵՂԻՑ ՉԻ ՇԱՐԺՎՈՒՄ

Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհուրդը, որ զգալի պատասխանատվություն է կրում հայ ռազմագերիներին հայրենիք վերադարձնելու գործընթացների համար, որեւէ հստակ քայլեր չի ձեռնարկում այդ հարցում: ArmLur.am-ն ԱԽ գրասենյակից հետաքրքրվել էր, թե հայ ռազմագերիների եւ Արցախից գերեվարված ռազմաքաղաքական ղեկավարության վերադարձի պահանջի հարցով ինչ հստակ աշխատանքներ են կատարվում: Ի պատասխան մեր հարցադրման՝ գրասենյակից նշել էին, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունն այսօր եւս շարունակում է աշխատել, որպեսզի բոլոր գերիները վերադառնան ՀՀ:

«Տեղեկացնում ենք, որ ռազմագերիների վերադարձի հարցը պարբերաբար քննարկվում է ադրբեջանական կողմի հետ: Որպես հստակ արդյունք պետք է արձանագրել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի եւ Ադրբեջանի Հանրապետության նախագահի աշխատակազմի՝ 2023 թ.-ի դեկտեմբերի 7-ի համատեղ հայտարարությունը, որի համաձայն՝ Ադրբեջանի Հանրապետությունը ազատ է արձակել 32 հայ զինծառայողի, իսկ Հայաստանի Հանրապետությունը՝ 2 ադրբեջանցի զինծառայողի: Հայաստանի Հանրապետության կառավարությունն այսօր եւս շարունակում է աշխատել, որպեսզի բոլոր գերիները վերադառնան ՀՀ»,- ասված է ArmLur.am-ին ուղարկված պատասխանում:

Պատերազմից անցել է ավելի քան 3 տարի, իսկ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության առեւանգումից՝ գրեթե 4 ամիս, սակայն «սայլը տեղից չի շարժվում»: Ստացվում է, որ փաստացի Անվտանգության խորհրդից պատասխան չունենք, թե ինչ աշխատանքներ են կատարում՝ Արցախի նախկին նախագահներին եւ պաշտոնյաներին Հայաստան վերադարձնելու հետ կապված:

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության ղեկավար կազմը երեկ Փաստաբանների պալատում հանդիպել է Պալատի ներկայացուցիչների հետ՝ ծանոթացնելու Հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային կիրառելի հարթակների հնարավորություններին:

Մինչ հանդիպում-քննարկումը գլխավոր հարկադիր կատարող Արսեն Մնացականյանը, թվայնացման ոլորտը համակարգող տեղակալ Գագիկ Հարությունյանը Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի եւ Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանի հետ մտքեր են փոխանակել երկկողմ արդյունավետ համագործակցության ապահովման ուղղությամբ:

Գագիկ Հարությունյանը Փաստաբանների պալատի ներկայացուցիչներին ծանոթացրել է հարկադիր կատարման ոլորտում ներդրված թվային գործիքների հնարավորություններին, դատարաններից, արբիտրաժային տրիբունալից, նոտարների կողմից էլեկտրոնային եղանակով հարկադիր կատարման ներկայացվող ակտերի թվայնացման գործընթացին, մանրամասնել էլեկտրոնային կատարողական վարույթի էությունը, ծառայության www.ðesa.aշ պաշտոնական կայքի «Անձնական գրասենյակ», «Հետախուզումներ» թվային հարթակների հնարավորությունները, ինչպես նաեւ դրանց միջոցով վճարումներ կատարելու առավելությունները, QR կոդով հարկադիր կատարողի կողմից կայացված որոշումների բնօրինակներին հասանելիության ապահովումն ու այլ հարցեր:

Հանդիպման ավարտին դահլիճում ներկա գտնվող եւ առցանց ձեւաչափով մասնակցած փաստաբանների կողմից բարձրացված հարցերի շուրջ ծավալվել է կառուցողական քննարկում, հնչել են առաջարկներ:

«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆԸ»՝ ՊԱՌԱԿՑՎԱ՞Ծ

Երեւանի ավագանու «Հանրային ձայն» խմբակցության ղեկավար Վահան Ավագյանը լքում է «Հանրային ձայն» կուսակցությունը:

«Հաշվի առնելով վերջին շրջանում կուսակցության ներսում տեղի ունեցող հայտնի իրադարձությունները, այդ թվում՝ հիմնադիր անդամների շրջանում մի շարք հարցերի շուրջ անհամաձայնությունները, ինչը, ըստ էության, հանգեցրեց կուսակցություն պառակտմանը, ցանկանում եմ ներկայացնել իմ դիրքորոշումը այս հարցում:

Նախ՝ նշեմ, որ «Հանրային ձայն» խմբակցությունը ձեւավորվել է «Հանրային ձայն» կուսակցության Երեւանի ավագանու 2023թ. սեպտեմբերի 17-ին կայացած ընտրությունների արդյունքում երեւանցիների կողմից ստացած ձայների շնորհիվ, եւ, անկախ ամեն ինչից, խմբակցությունը շարունակելու է իր աշխատանքը նույն տեմպով:

Ես՝ Վահան Ավագյանս, հայտարարում եմ, որ լքում եմ «Հանրային ձայն» կուսակցության շարքերը՝ չցանկանալով այլեւս որեւէ կերպ կապ ունենալ վերոնշյալ կուսակցության հետ»,- ասված է նրա հայտարարության մեջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿԱՐԾ ԱՍԱԾ՝ ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ Է»

Տիրան Խաչատրյանի պաշտպանական խումբը հայտարարություն է տարածել. «Չնայած Տիրան Խաչատրյանի պաշտպանական խմբի՝ նախաքննության ընթացքում փաստական հանգամանքներին չանդրադառնալու դիրքորոշմանը՝ այս փուլում անհրաժեշտություն է առաջացել որոշակի փաստերով հերքելու միջադեպի վերաբերյալ իրականությանը չհամապատասխանող տեղեկությունները, որոնք շրջանառվում են լրատվամիջոցներում, եւ անդրադառնալու Տիրան Խաչատրյանի կալանավորման որոշմանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանցագործության մեջ մեղադրվող գեներալ-լեյտենանտ Տիրան Խաչատրյանը չի ընդունում մեղքը, քանի որ իրեն վերագրվող արարքը՝ զենքի գործադրմամբ խուլիգանությունը, չի համապատասխանում դեպքի իրական հանգամանքներին եւ օբյեկտիվ իրականությանը:

Նախեւառաջ նշենք, որ Տիրան Խաչատրյանի կողմից զենքի գործադրումը եղել է բացառապես ինքնապաշտպանական նկատառումներով, այսինքն՝ իր կյանքին եւ առողջությանը սպառնացող վտանգը չեզոքացնելու նպատակով: Տիրան Խաչատրյանի՝ զենք գործադրելը դրսեւորվել է օդ կրակելով՝ առանց վեճի մասնակիցներին վնասելու որեւէ մտադրության: Ինչ վերաբերում է վեճի առիթին, ապա նշենք, որ Տիրան Խաչատրյանի մասնակցությամբ վեճը չի եղել քաղաքական որեւէ հարցի շուրջ: Վիճաբանության հետեւանքով վնասվածք ստացած անձը չի հանդիսանում վեճի մասնակից, իսկ նրա վիրավորումը պատահականության հետեւանք է: Ընդ որում՝ վնասվածք ստացած անձի մոտ դատաբժշկական փորձաքննությամբ հաստատվել է թեթեւ մարմնական վնասվածք, եւ այդ անձը որեւէ բողոք չի ներկայացրել:

Տիրան Խաչատրյանի կալանավորումը զուրկ է կալանքի պարտադիր պայմանից՝ հիմնավոր կասկածից եւ հիմքերից: Դատարան ներկայացված գործի նյութերից ակնհայտ է դառնում, որ վարույթն իրականացնող մարմնի եւ դատարանի հետեւությունները հիմնավոր կասկածի առկայության մասով ամբողջովին անհիմն են, քանի որ Տիրան Խաչատրանի գործողությունները չեն հետապնդել հասարակության նկատմամբ անհարգալից կամ իրավական կամ բարոյական նորմերի նկատմամբ բացահայտ արհամարհական վերաբերմունք ցուցաբերելու նպատակ, այլ Տիրան Խաչատրյանը զուտ խնդիր է ունեցել պաշտպանելու իր կյանքն ու առողջությունը: Դատարանը որպես կալանքի կիրառման հիմք է նշել հնարավոր փախուստի կամ թաքնվելու, ինչպես նաեւ վարույթը խոչընդոտելու ռիսկերը, որոնք կրում են բացառապես ենթադրական բնույթ եւ հիմքում չունեն այդպիսի ռիսկը հիմնավորող որեւէ փաստական տվյալ: Ավելին՝ դատական նիստում պաշտպանական կողմը միջնորդել է Տիրան Խաչատրյանի նկատմամբ կալանքի փոխարեն կիրառել այլընտրանքային խափանման միջոցների համակցություն՝ տնային կալանք եւ 10 միլիոն ՀՀ դրամի չափով գրավ: Ի պատասխան մեղադրանքի՝ կողմը հայտնեց, որ թեեւ տնային կալանքը զսպում է փախուստի ռիսկը, սակայն չի կարող ապահովել Տիրան Խաչատրյանի կողմից վարույթի մասնակիցների նկատմամբ ազդեցություն գործադրվելու ռիսկի զսպումը հնարավոր շփումների ու հեռախոսազանգերի պայմաններում: Այնինչ ո՛չ միջնորդությամբ եւ ո՛չ էլ, հետեւաբար, դատական ակտով չեն սահմանափակվել Տիրան Խաչատրյանի տեսակցություններն ու հեռախոսազանգերը, ինչը ցույց է տալիս, որ կալանքի միջնորդությունը բավարարելն ու տնային կալանքի միջնորդությունը մերժելը չի բխել ընտրված խափանման միջոցի օրենսդրական նպատակներից: Կարճ ասած՝ ինքնանպատակ է:

Կարծում ենք, որ Տիրան Խաչատրյանի կալանավորումը քաղաքական իշխանությունների հասցեին նրա խիստ եւ պարբերական քննադատությունների համար նրան պատժելու թաքնված շարժառիթ ունի:

Տիրան Խաչատրյանին կալանավորելու որոշումը բողոքարկվել է վերաքննիչ քրեական դատարան:

Հիշեցնենք, որ գեներալ-լեյտենենանտ Տիրան Վազգենի Խաչատրյանը բարձրագույն ռազմական կրթությամբ զինվորական է, Հայոց բանակում ծառայել է 1991-2021 թվականներին՝ զբաղեցնելով Արցախի Հանրապետության պաշտպանության բանակում եւ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում բարձր պաշտոններ: Ռազմական գործում ունեցած նշանակալի հաջողությունների եւ անբասիր ծառայության համար պարգեւատրվել է բարձրագույն՝ Հայրենիքի շքանշանով (ՀՀ ազգային հերոսի կոչում), Մարտական խաչ երկրորդ աստիճանի, ինչպես նաեւ ՀՀ եւ ԱՀ Մարտական ծառայության բազմաթիվ մեդալներով»:

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՁԵՌՆՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ Հայաստանի Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում «սպանություն» (հանկարծամահություն) հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, հունվարի 22-ին՝ ժամը 22:45-ի սահմաններում, Երեւանի 1-03 շտապօգնության 4-րդ ենթակայանից ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Էրեբունու բաժին ահազանգ է ստացվել, որ բժիշկների հերթապահ խումբը կանչով մեկնել է Նուբարաշեն վարչական շրջանի 12-րդ փողոցի շենքերից մեկի բնակարան, որտեղ հայտնաբերել են տղամարդու դի:

Դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության Էրեբունու բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետ Դավիթ Պետրոսյանի, բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Սենիկ Երանոսյանի եւ ոստիկանության Նուբարաշենի բաժանմունքի պետ Կարեն Հովհաննիսյանի գլխավորությամբ:

Ժամանել են նաեւ ՀՀ ՆԳՆ ոստիկանության Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 4-րդ գումարտակի պարեկները՝ գնդի հրամանատար Անդրանիկ Իսախանյանի, գումարտակի հրամանատար Արմեն Գասպարյանի գլխավորությամբ:

Ահազանգով ժամանել են նաեւ Հայաստանի Քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի խումբը՝ բաժնի պետ Հ. Պետրոսյանի եւ հատկապես կարեւոր գործերով քննիչ Ա. Մելքոնյանի գլխավորությամբ:

Ոստիկաններն ու քննիչները բնակարանում հայտնաբերել են նշված տան բնակիչ 54-ամյա Հովսեփ Հ.-ի դին:

Դատաբժշկի նախնական եզրակացության համաձայն՝ արտաքին զննությամբ դիակի վրա բռնության հետքեր չեն հայտնաբերվել, իսկ աջ ազդրի վրա առկա է եղել մակերեսային վերք:

Քննիչի որոշմամբ՝ նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԱՎՏՈՎԹԱՐՆԵՐ

ԱՃԽԱՏԱՆՔ ՉԵՆ ԿԱՏԱՐԵԼ

Հունվարի 24-ին ճանապարհի մերկասառույցի պատճառով ավտովթար է տեղի ունեցել Վայոց ձորի մարզում:

Ժամը 10:50-ի սահմաններում Սյունիքի մարզի բնակիչ 38-ամյա Գարեգին Ղ.-ն իր վարած Infiniti մակնիշի ավտոմեքենայով Երեւան-Մեղրի ավտոճանապարհի Մալիշկա գյուղի վարչական տարածքում դուրս է եկել երթեւեկելի գոտուց, բախվել երկաթե արգելապատնեշներին եւ գլխիվայր շրջվել:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ըստ նախնական տեղեկությունների՝ վթարի հետեւանքով բարեբախտաբար տուժածներ չկան:

Օպերատիվորեն դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Վայոց ձորի վաշտի պարեկները՝ վաշտի հրամանատար Միհրան Սիրեկանյանի, վաշտի հրամանատարի տեղակալ Կարապետ Հարությունյանի գլխավորությամբ:

Վթարի փաստով ՊԾ Վայոց ձորի վաշտում փաստաթղթեր են ձեւակերպվում:

Ֆոտոլրագրողը հայտնում է, որ վթարի հիմնական պատճառը ճանապարհի մերկասառույցն է եղել, քանի որ ճանապարհը սպասարկող ընկերությունը ոչ մի աշխատանք չի կատարել՝ ճանապարհը աղ ու ավազով մշակելու ուղղությամբ:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ՏՈՒԺԱԾՆԵՐ ՉԿԱՆ

Հունվարի 21-ին ավտովթար է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 19:00-ի սահմաններում Կոտայքի մարզի բնակիչ 21-ամյա Ժորա Ա.-ն իր վարած Hyundai Elantra մակնիշի ավտոմեքենայով Երեւան-Սեւան ավտոճանապարհին՝ Ալափարս-Չարենցավան խաչմերուկում, դեռեւս անհայտ հանգամանքներում դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց, բախվել բետոնե էլեկտրասյանը:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, վթարի հետեւանքով, ըստ նախնական տեղեկությունների, բարեբախտաբար տուժածներ չկան:

Օպերատիվորեն դեպքի վայր են ժամանել ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի 1-ին վաշտի պարեկները՝ գումարտակի հրամանատարի տեղակալ Լեւոն Բաղալյանի, գումարտակի ծառայության ավագ տեսուչ Կառլեն Բաղյանի, վաշտի հրամանատար Վահագն Կարապետյանի գլխավորությամբ:

Տեղում տարածքը սահմանազատել են նույն վաշտի ավագ պարեկ Վահե Մելքոնյանն ու պարեկ Տիրան Եղիազարյանը:

Վթարի փաստով ՊԾ Կոտայքի մարզի գումարտակում փաստաթղթեր են ձեւակերպվում:

Ծանուցում. Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 40 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՀՆԴԻԿՆԵՐԸ՝ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ

«Տավուշ տեքստիլ» ընկերության Բերդ քաղաքի ձեռնոցի գործարանում աշխատում է 27 հնդիկ բանվոր: Նույն ընկերության սահմանամերձ Պառավաքարի ձեռնոցի գործարանում աշխատում է 40-ից ավելի հնդիկ, միասին՝ մոտ 60 հնդիկ բանվոր: Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունում աշխատում է հնդիկ բանվորների 6-հոգանոց բրիգադ: Իջեւան քաղաքում՝ խորհրդային տարիներին գործած հանրախանութի շենքի առաջին եւ երկրորդ հարկերում գործող կարի երկու արտադրամասերում, աշխատում են մոտ 90 հնդիկ երիտասարդներ, որոնք բաճկոններ, տարբեր տեսակի վերնազգեստ են կարում:

ԳՈՒՄԱՐ ԿՍՏԱՆԱ՞

Լոռու մարզում գործող մետաղական հանքերի հանքաքարը վերամշակող ընկերությունները ավելի քան 20 տարի սպառնալիք են Նոյեմբերյան խոշոր համայնքի՝ Դեբեդ հովտի պտղատու այգիների համար: Ներկայումս Ալավերդու պղնձաձուլական գործարանը չի գործում, սակայն Ախթալայի լեռնահարստացման գործարանից, Թեղուտի հանքից արտանետումների հետեւանքով Աղստեւ գետը աղտոտվում է ծանր մետաղներով: Գետի վտանգավոր ջրով են ոռոգվում Թումանյանի տարածաշրջանի Շնող, Ճոճկան, Այրում գյուղերի եւ Նոյեմբերյան խոշոր համայնքի բնակակավայրերի՝ Արճիսի, Այրում քաղաքի, Լճկաձորի, Հաղթանակի, Պտղավանի, Դեղձավանի, Բագրատաշենի, Դեբեդավանի հողատարածքները: Այդ բնակավայրերում անմշակ հողեր չկան, սեփականաշնորհված եւ վարձակալությամբ տրված բոլոր հողերը մշակում են, առավել եկամտաբեր են Դեբեդի ջրերով ոռոգվող դեղձի, կորոլյոկի եւ այլ մրգատեսակների այգիները: Դեբեդի հովտի այգեգործները բողոքում են, որ ծանր մետաղներով հագեցած Դեբեդի ջրով ոռոգելուց հետո պտղատու ծառերի շուրջ հողը ամրանում է, ծառերը՝ չորանում: Նախկինում գետից նմուշներ են վերցրել եւ Երեւանում փորձաքննություն կատարել, պաշտոնյաները հայտարարել էին, որ Բնապահպանության նախարարությունը երկարաժամկետ մոնիտորինգ է իրականացնելու Դեբեդ գետն իր թափոններով աղտոտող գործարանների կողմից Դեբեդ արտանետումների վերաբերյալ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը նախկինում հայտարարել է, որ Լոռու մարզում գործող հանքարդյունաբերական ձեռնարկությունների վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկի մեջ ընդգրկված է Նոյեմբերյան համայնքը (2024 թվականի համար): Մարզպետին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ նրան հարցնելով՝ այդ նպատակով Նոյեմբերյան համայնքին որքան գումար է տրվելու, այդ գումարը երբ, ինչ մեխանիզմով է տրվելու: Այդ հարցման պատասխանը դեռ չենք ստացել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀՀ-Ն ԱՆՄԱՍՆ ՄՆԱՑ

250 ՄԼՆ ԵՐԵԽԱ՝ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ

Կլիմայի փոփոխությամբ, հակամարտություններով, տեղահանություններով, համաճարակներով պայմանավորված՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերջին տվյալներով աշխարհում կրթությունից դուրս է մնում մոտ 250 մլն երեխա, եւ օրեցօր այդ թիվն աճում է: ՅՈՒՆԻՍԵՖ-ի կրթության բաժնի ղեկավար Ալվարդ Պողոսյանը նշեց, որ կրթական գործընթացի վրա ամենամեծ ազդեցությունն ունենում են կլիմայի փոփոխությունը, աղետները:

«250 մլն ցուցանիշը հաշվարկվում է՝ կորոնավիրուսի ժամանակաշրջանից սկսած: Ինչպես գիտենք, այդ ժամանակ ստեղծված իրավիճակը մեծ ազդեցություն թողեց կրթական գործընթացների վրա: Դրանից բացի, 2020 թվականին Պակիստանում մեծ ջրհեղեղ եղավ, եւ 26 հազար դպրոց փլուզվեց: Հազարավոր դպրոցներ ավերվեցին Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով: Եթովպիայում շարունակական երաշտ է, որի հետեւանքով տուժած համայնքներում բնականոն կյանքը խաթարվում է, եւ երեխաները զրկվում են կրթության հնարավորությունից: Կրթության ընդհատումները բերում են բացեր, ու դրանք չլրացնելու, մարդկային ռեսուրսների զարգացման ուղղությամբ աշխատանք չկատարելու պարագայում լուրջ տնտեսական խնդիրներ կարող են առաջանալ»,-ասաց Ալվարդ Պողոսյանը:

Հայաստանը եւս անմասն չմնաց այդ միտումներից, ու 2023 թվականին առերեսվեց ղարաբաղյան հակամարտության սրացմանը, որի հետեւանքով 100 հազարից ավելի արցախցիներ բռնի տեղահանվեցին: Հայաստանում նրանց կեցության ու սոցիալական հարցերը կարգավորելուց զատ, կարեւոր էր երեխաների կրթության շարունակականության ապահովումը: ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը գործընկեր միջազգային, հասարակական կազմակերպությունների հետ ծավալուն աշխատանք կատարեց արցախցի երեխաներին դպրոցներում տեղավորելու, նրանց կրթության շարունակականությունն ապահովելու համար: ՀՀ ԿԳՄՍ նախարարության հանրակրթական եւ արտադպրոցական հաստատությունների համակարգման բաժնի պետ Ստալ Սարդարյանը տեղեկացրեց, որ, վերջին տվյալներով, ԼՂ-ից բռնի տեղահանված 17 հազար սովորող ընդգրկված է հանրակրթական ուսումնական հաստատությունում:

«Սկզբնական փուլում երեխաները դպրոցներում տեղավորվեցին՝ անկախ անհրաժեշտ փաստաթղթերից: Դրանից հետ կատարվեց նրանց կարիքի գնահատումը, շատ արագ փորձեցինք վեր հանել եղած խնդիրները, ըստ դրա էլ մշակվեցին աջակցության ծրագրերը: Աջակցություն ցուցաբերվեց ոչ միայն հոգեբանական, այլեւ կրթական ծառայությունների առումով, հատկապես՝ բարձր ավարտական դասարաններում սովորողների համար մասնագիտական կողմնորոշման հարցում: Բոլոր աշակերտներն ապահովվեցին նաեւ անհրաժեշտ դասագրքերով»,- ասաց Ստալ Սարդարյանը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի կրթության բաժնի ղեկավար Ալվարդ Պողոսյանի խոսքով՝ կարիքների գնահատումը ցույց տվեց, որ հիմնական բացերից մեկը գրենական պիտույքների, դպրոցական պայուսակների, այլ պարագաների բացակայությունն էր: Նախարարությունը, համայնքները, միջազգային ու տեղական կազմակերպությունները լծվեցին այդ պարագաների ձեռք բերման ու տրամադրման գործին:

«Այդ փուլում կարեւոր էր հյուրընկալող դպրոցների հետ աշխատանքը, որպեսզի կարողանային ինտեգրումը սահուն ապահովել: Շատ ցցուն էին երեխաների հոգեբանական, սոցիալական խնդիրները, հաղորդակցման դժվարությունները: Այստեղ մեծ աշխատանք էր տարվում դպրոցների հոգեբանների հետ: Սկզբնական շրջանում դժվարություն կար այս երեխաներին դպրոց բերելու հարցում, որովհետեւ անորոշ վիճակ էր, թվում էր, թե ինչ-որ փուլից հնարավոր է վերադառնան իրենց տներ: Մեծ աշխատանք պահանջվեց, որ այդ երեխաները գան դպրոց»,- ասաց Ալվարդ Պողոսյանը: Մյուս խնդիրն այն էր, որ ԼՂ-ում եղած ժամանակ, ստեղծված իրավիճակով պայմանավորված, նրանցից շատերը բաց էին թողել կրթական ծրագրեր: Անհրաժեշտություն կար այս ուղղությամբ եւս հավելյալ աշխատելու:

Այս ընթացքում մշակվեց եւ իրագործվեց Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսուցիչների աջակցության ծրագիրը: Կառավարության որոշմամբ հաստատվեց գործուղման կարգ, որով հնարավորություն տրվեց արցախցի ուսուցիչներին գործուղել մարզեր եւ աշխատել այնտեղ գտնվող ուսումնական հաստատություններում: Նրանց տրամադրվում է մանկավարժական աշխատավարձի 30 տոկոսի չափով լրավճար: Սյունիքի, Վայոց ձորի մարզերի ուսումնական հաստատություններում, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ եւ Վարդենիս համայնքի դպրոցներում, Տավուշի մարզի Նոյեմբերյան, Իջեւան, Բերդ համայնքների ուսումնական հաստատություններում, բացի աշխատավարձի 30 տոկոսի չափով լրավճարից, հավելյալ ֆիքսված 50 հազար դրամ լրավճար է նախատեսվում: Վերջին տվյալներով՝ ստացվել է 300 դիմում, արդեն 250 ուսուցիչ գործուղվել է եւ աշխատում է մարզային ուսումնական հաստատություններում: Սա կօգնի նաեւ մարզային դպրոցներում ուսուցիչների թափուր հաստիքները լրացնել:

ՅՈՐԴՈՐ

ՀՈԳԱՏԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ՝ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունն անդրադարձել է հունվարի 24-ին Երեւանի Իսակովի պողոտայում ձիու եւ քուռակի՝ ավտոմեքենայի հարվածի պատճառով վնասվելու եւ անօգնական վիճակում հայտնվելու դեպքին:

«Այսօր արտակարգ դեպք է տեղի ունեցել Երեւանում: Իսակովի պողոտայում ձին եւ քուռակը անօգնական վիճակում են հայտնվել: Դեպքի վայրից հայտնում են, որ քուռակի հետեւի 2 ոտքերը կոտրված են, հավանաբար ավտոմեքենա է հարվածել ու հեռացել: Ձիուն եւ քուռակին առաջինը օգնության են հասել հարակից դարբնոցի աշխատակիցները, ովքեր ձիուն ու քուռակին տեղափոխել են անվտանգ վայր: Ապա դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի 1-ին գումարտակի պարեկները, իրականացված աշխատանքներից հետո հայտնաբերվել է կենդանիների սեփականատերը եւ նրանց տեղափոխել»,- հայտնեցին ՇՄ նախարարությունից՝ քաղաքացիներին հորդորելով կենդանական աշխարհի նկատմամբ ցուցաբերել պատասխանատու եւ հոգատար վերաբերմունք, մասնավորապես՝ դրանց պահման եւ խնամքի պարտադիր պահանջների ապահովմամբ:

ՀՀ Քրեական օրենսգրքի 307 հոդվածով սահմանված է պատասխանատվություն կենդանիների նկատմամբ դաժան վերաբերմունքի համար՝ պատիժ՝ համապատասխանաբար տուգանքով, հանրային աշխատանքներով կամ ազատազրկմամբ:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար. 2 մարդ զոհվել է, 29-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

«ԱՇԽԱՏԵՆՔ՝ ՍՈՎՈՐԵԼՈՎ»

ՀԱՄԱՀՈՒՆՉ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻՆ

«Մասնագիտական կրթության եւ ուսուցման մասին» օրենսդրական բարեփոխումների նախագիծը ոլորտի համար ունենալու է հեղափոխական նշանակություն. Ազգային ժողովում խորհրդարանական լսումների ժամանակ այս մասին ասաց կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ ներկայացնելով, թե ինչ բարեփոխումներ են իրականացվելու:

«Մենք վերացնում ենք գործող օրենքի տարբերակումը մասնագիտական ուսումնական հաստատությունների երկու տեսակների միջեւ՝ քոլեջների եւ ուսումնարանների, որը գործնական որեւէ խնդիր չի լուծելու: Փոխարենը, մասնագիտական կրթության համակարգում կունենանք միայն քոլեջ տեսակը՝ իհարկե պահպանելով կրթական ծրագրերի մակարդակները՝ արհեստագործական եւ միջին մասնագիտական ուղղություններով:

Նախագծով առաջարկվող ամենակարեւոր փոփոխությունն աշխատանքի վրա հիմնված ուսուցման ինստիտուցիոնալ ներդրումն է: Սրանով նաեւ ամփոփում ենք վերջին հինգ տարիների Դուալ կրթության փորձարարությունը, եւ նաեւ հենց դրա հիման վրա է, որ օրենքում տրված են այն ձեւակերպումները, որոնք օգնելու են կրթության կազմակերպման համար հիմնական նշանաբանը դարձնել «Աշխատենք՝ սովորելով», «Սովորենք՝աշխատելով» կամ «Աշխատենք եւ սովորենք»: Սա դառնալու է ՄԿՈՒ ոլորտում կրթության կազմակերպման հիմնական ձեւը»,- ասաց Անդրեասյանը:

Նախարարի խոսքով՝ կրթության կառավարման եւ կազմակերպման համար կներդրվի համագործակցության մոդել:

«Օրենքում բարելավվել է ուսումնական հաստատության կազմակերպաիրավական կարգավիճակի հնարավորությունը, որը թույլ է տալիս մասնավոր գործընկերների հետ փորձարկել եւ իրացնել նոր ձեւաչափով համագործակցություն՝ հասնելով համատեղ կառավարման մոդելների»,- ասաց Անդրեասյանը:

Ըստ նախարարի՝ օրենսդրական փաթեթով անցում են կատարելու կրեդիտային համակարգի որակավորումների ազգային եւ ոլորտային շրջանակներին:

«Բացի այդ, նախագծով արմատապես վերանայվել են կրթական ծրագրերի իրականացման մեթոդաբանական հիմքերը, որակի ապահովման եւ վերահսկողության կառուցակարգերը: Դա թույլ կտա, որպեսզի մենք բովանդակային ստանդարտների մասով վստահ լինենք, որ այն կրթությունը, որը իրականացվում է մեր երկրում, համահունչ է միջազգային ամենալավ ստանդարտներին»,- նշեց Անդրեասյանը:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3830 ՈՒՍՈՒՑԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՎԱԾ ԵՆ

Կամավոր ատեստավորման վերաբերյալ ուսուցիչների կողմից բարձրաձայնված ամենակարեւոր խնդիրներից մեկը դրա տեւողությունն է. Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հարցի լուծումը քննարկել է Գնահատման եւ թեստավորման կենտրոնի հետ:

«Շատ ուսուցիչներ բարձրաձայնում են այն հարցը, որ կարող էին թեստը լուծել ամբողջությամբ, եթե ժամանակն իրենց բավարարեր: Մենք Գնահատման ու թեստավորման կենտրոնի հետ այս հարցը քննարկել ենք, որովհետեւ կամավոր ատեստավորման նպատակը ուսուցչի արագությունը ստուգելը չէ, այլ գիտելիքները ստուգելն է: Հետեւաբար, մենք չպիտի ունենանք մի իրավիճակ, երբ ուսուցիչը ժամանակով սահմանափակված լինելու հետեւանքով կունենա ցածր արդյունքներ: Պիտի ամեն ինչ անենք, որ հաջորդ տարի այս խնդիրը չունենանք»,-հավաստիացրեց փոխնախարար Արաքսիա Սվաջյանը՝ հավելելով, որ բոլոր այն խնդիրները, որոնք նախորդ տարիներին արձանագրվել են, փորձում են անպայման լուծել:

Անդրադառնալով կամավոր ատեստավորման գործող ընթացակարգերի առանձնահատկություններին՝ Սվաջյանը կարեւորեց 2023 թվականին կատարված այն փոփոխությունը, ըստ որի՝ բոլոր դասարանների ու առարկաների ուսուցիչներին հնարավորություն է ընձեռվել մասնակցել ատեստավորմանը:

Այս ուսումնական տարվա ընթացքում 4000-ից ավելի ուսուցիչ է մասնակցել կամավոր ատեստավորմանը, ընդ որում՝ եղել են ուսուցիչներ, որոնք 3 տարի անընդմեջ մասնակցել են, ամեն տարի բարելավում գրանցել կամ առնվազն պահպանել են իրենց նախորդ տարվա արդյունքները:

«Ընդհանուր առմամբ, ունենք 3830 ուսուցիչ, որոնք արդեն իսկ կամավոր ատեստավորված են եւ ունեն բարձրացված դրույքաչափ ու ստանում են համապատասխան հավելավճար: Բնականաբար, սա այն ցուցանիշը չէ, որին մենք ձգտում ենք, եւ ուզում ենք, որ մեր ուսուցիչները մասնակցության շատ ավելի մեծ տոկոս ունենան: Դրանով պայմանավորված՝ պարբերաբար ընթացակարգերում փոփոխություններ ենք անում: Օրինակ՝ եթե մինչ այս տարի 60-69 տոկոս արդյունք գրանցած ուսուցիչները համարվում էին ատեստավորված, բայց դա իրենց աշխատավարձի վրա որեւէ ազդեցություն չէր ունենում, ապա այս տարի նրանց դրույքաչափը բարձրանում է՝ դառնալով 200 հազար դրամ»,-ներկայացրեց փոխնախարարը՝ հայտնելով, որ այլ շեմեր են սահմանվել, եւ ուսուցիչները եւս մեկ անգամ ատեստավորմանը մասնակցելու հնարավորություն են ունենում:

Սվաջյանը կարեւորեց նաեւ վերապատրաստման հնարավորության ներդրումը, որի շնորհիվ բոլոր այն ուսուցիչներին, որոնք չեն հաղթահարում կամավոր ատեստավորումը, պետության կողմից մասնագիտական գիտելիքներով անվճար վերապատրաստման հնարավորություն է տրվում: Վերապատրաստումները հիմնականում իրականացվում են այն բուհերի կողմից, որոնք այդ ուսուցիչներին պատրաստող ուսումնական հաստատություններն են:

Ըստ փոխնախարարի՝ 2024 թվականին նորություններ կլինեն պարտադիր վերապատրաստման համակարգում:

«Տարիներ շարունակ պարտադիր վերապատրաստումներն իրականացվել են նույն ծրագրով բոլոր ուսուցիչների համար՝ անկախ նրանից՝ սկսնակ է, թե փորձառու, փորձագետ ուսուցիչ, թե վերապատրաստող: Բնականաբար, դա այնքան էլ արդյունավետ մեխանիզմ ու համակարգ չի: Մշակել ենք մի մեխանիզմ, որն առաջիկայում կգործարկվի. դրանով գնահատվելու են ուսուցիչների կարիքները, եւ այդ գնահատողը լինելու է հենց ինքը՝ ուսուցիչը, եւ այդ դպրոցի տնօրենը»,-մանրամասնեց մեր զրուցակիցը:

Նրա խոսքով՝ տնօրենն ու ուսուցիչը յուրաքանչյուրն իր հերթին կգնահատեն կարիքները, որից հետո միջինացվելու են արդյունքները, ու որոշվելու է, թե տվյալ ուսուցիչը որ մակարդակի վերապատրաստման կարիք ունի:

«Հնարավոր է՝ ուսուցիչը տարբեր գործընթացներում, տարբեր մոդուլներում, տարբեր մակարդակներում մի բանից շատ ուժեղ լինի, բայց մյուսում դեռ աջակցության կարիք ունենա: Այս համատեքստում նաեւ ավելացրել ենք գիտելիքների կտորը, որովհետեւ կամավոր ատեստավորումը մանկավարժությանն ուղղված կտոր չի, այլ զուտ առարկայական գիտելիքներն են»,- ընդգծեց Սվաջյանը:

Կարիքների գնահատման գործընթացում կլինի նաեւ առանձին բաղադրիչ. եթե, օրինակ, ուսուցչի կամ տնօրենի կողմից նշում կատարվի, որ տվյալ ուսուցիչը առարկայական բաղադրիչով գիտելիքների ուժեղացման խնդիր եւ կարիք ունի, ապա նրա համար վերապատրաստումները կկազմակերպվեն հենց այդ ուղղությամբ:

ԵՂԱՆԱԿ

ԻՐԱՎԻՃԱԿԸ՝ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՆ

ՀՀ տարածքում կան փակ եւ դժվարանցանելի ավտոճանապարհներ:

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ ՀՀ ներքին գործերի նախարարության փրկարար ծառայությունից, մինչեւ փետրվարի 15-ը, ճանապարհի վերանորոգման աշխատանքներով պայմանավորված, Մ-6 մայրուղու Վանաձոր-Ալավերդի ճանապարհահատվածի մոտ 38-40-րդ կմ փակ է լինելու ավտոբուսների եւ կցորդով կամ կիսակցորդով բեռնատար ավտոմեքենաների համար: Շրջանցիկ ավտոճանապարհը կգործի Նոյեմբերյան քաղաքով:

«Փակ են Արագածոտնի մարզում «Ամբերդ» բարձր լեռնային օդերեւութաբանական կայանից դեպի Ամբերդ ամրոց եւ Քարի լիճ տանող ավտոճանապարհները:

Փակ են Վարդենյաց լեռնանցքը, Սարավան-«Զանգեր» կոչվող հատվածը, Մ2-ից դեպի Ջերմուկ տանող եւ Շիրակի մարզի Վարդաղբյուր-Հարթաշեն, Սալուտ-Ջորաշեն ավտոճանապարհները:

Տավուշի մարզի ավտոճանապարհները, Ջերմուկի խաչմերուկից դեպի Սարավան - «Զանգեր» կոչվող հատվածը, Ստեփանավանի տարածաշրջանի, Վանաձոր-Դիլիջան, Նոյեմբերյան-Իջեւան, Սյունիք գյուղից դեպի Տաթեւ տանող ավտոճանապարհները փակ են կցորդիչով բեռնատարների համար:

Տավուշի մարզի ավտոճանապարհները դժվարանցանելի են մարդատար ավտոմեքենաների համար:

Լոռու մարզի ավտոճանապարհները, Սյունիքի մարզի, Աշոցքի եւ Ամասիայի տարածաշրջանների, Երեւան-Սեւան 24-39-րդ կմ (բուք), Ալափարս-Չարենցավան ավտոճանապարհները դժվարանցանելի են բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար»,- հայտնում են ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայությունից՝ հավելելով, որ հանրապետության ողջ տարածքում (ընդհատումներով) տեղում է ձյուն:

Ըստ աղբյուրի՝ Վարդենյաց լեռնանցքում, Արագածի եւ Ամասիայի տարածաշրջաններում, Երեւան-Մեղրի ավտոճանապարհի 163-167-րդ կմ-ին բուք է, իսկ Շիրակի մարզի Հոռոմ-Հայրենյաց ավտոճանապարհին՝ գետնաբուք:

Սարավան-«Զանգեր» կոչվող հատվածում մառախուղ է:

Վրաստանի ՆԳՆ ԱԻ դեպարտամենտից եւ ՌԴ ԱԻՆ Հյուսիսային Օսիայի ճգնաժամային կառավարման կենտրոնից ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ստացած տեղեկատվության համաձայն՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը փակ է բեռնատարների համար:

Փրկարար ծառայությունը վարորդներին խորհուրդ է տալիս երթեւեկել բացառապես ձմեռային անվադողերով:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍԵՎԱԿ-100

ՆՈՐ ԼԵԶՎԱՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԲԵՐԵՑ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի գրողների միությունը Պարույր Սեւակի 100-ամյակը տոնեց գրական միջոցառմամբ, որի ընթացքում բազմիցս նշվեց՝ Սեւակը նոր խոսք, նոր լեզվամտածողություն բերեց հայ գրականություն:

Միջոցառումն անցկացվեց գրողի ծննդյան օրը՝ հունվարի 24-ին:

Միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանի խոսքով՝ Սեւակի սերնդի կյանքը համընկավ դժվար ժամանակների հետ՝ ստալինյան ռեպրեսիաներ, պատերազմ, բռնաճնշումներ եւ այլն: «Շատ ծանր առաքելություն ունեին Սեւակի սերնդի ստեղծագործողները: Չարենցի մահից, Մահարու աքսորից ու այլ գրողների՝ գրական ասպարեզից հեռանալուց հետո գրականությունն ընկավ աշուղների ձեռքը: Այդ մոլեռանդ արշավանքը պատրաստ էր խեղդամահ անել հայ գրականությունը, եւ այդ ժամանակ շատ կարեւոր էր գրողի՝ գրականությունը պաշտպանելու հավատամքը»,- ասաց Միլիտոնյանն ու հավելեց՝ հենց Սեւակն ու նրա սերունդը դա արեցին:

Նա հիշեցրեց՝ Սեւակն իր առաջին բանաստեղծությունները գրում էր տերյանական, չարենցյան ոգով: «1942-ին «Սովետական գրականություն» ամսագրում տպագրվեցին նրա առաջին ստեղծագործությունները, որոնք շատ հետաքրքիր էին: Երբեմն մտածում եմ, թե նա ինչ այլ գործեր կգրեր, եթե պահպաներ այդ ոճը»,-խոստովանում է Միլիտոնյանը:

Ըստ նրա՝ Պարույր Սեւակի բանաստեղծությունները ողնաշարային էին հայ գրականության մեջ չարենցյան գիծը շարունակելու գործում:

«Սեւակը «Մարդը ափի մեջ» գրքով նոր խոսք ասեց՝ մարդուն կենտրոն համարելով, այնինչ ստալինյան ժամանակներում ոչ թե անհատն էր գլխավորը, այլ կոլեկտիվը: Նա նոր ու հետաքրքիր պատկերներ, կին եւ տղամարդ հարաբերությունների, բաց տեսարանների մթնոլորտը նաեւ բերեց: Պարույր Սեւակի 100-ամյակին պետք է կարողանալ լավագույնս արժեւորել նրան, ընդլայնել ընթերցողների ճաշակը, ճանաչելի դարձնել ոչ միայն Սեւակի պոեզիան, այլեւ պոեզիայի մասին նրա գրականագիտական հոդվածները, թարգմանությունները, որոնց գրականագետները քիչ են անդրադարձել»,- հավաստիացրեց Միլիտոնյանը:

Գրականագետ Սամվել Մուրադյանը հիշեցրեց՝ Սեւակն իր կենսագրականում խոստովանել է, որ ամբողջ մի տասնամյակ զբաղված է եղել սիզիփյան անպտուղ աշխատանքով: «Ինչ գրում էի այն ժամանակ, չէր կարելի, իսկ հիմա էլ անհարմար է ներկայացնել: Ես զբաղված էի իմ ձայնը փոխելով»,-գրել է Պարույր Սեւակը:

«Սեւակն Ազգային գրադարանում բացատրել է «Նորից քեզ հետ» վերնագրի խորհուրդը: Նա նշել է, որ «քեզ» ասելով՝ դիմում է ժողովրդին, որովհետեւ երկար տարիներ զբաղված է եղել իր ձայնը փոխելով եւ ժողովրդի հետ չի եղել, իսկ 20-րդ համագումարից հետո նորից ժողովրդի կողքին լինելու հնարավորություն է ստացել»,-պատմեց Մուրադյանն ու հավելեց, որ եղել են տարիներ, երբ Հայաստանի տաղանդավոր գրողներից ոչ մեկը չի կարողացել Երեւանում գիրք տպագրել: Դա հաջողվել է Պարույր Սեւակին եւ Հրանտ Մաթեւոսյանին Մոսկվայում ունեցած լայն կապերի շնորհիվ: Նրանց որոշ գրքեր նախ հրատարակվել են Մոսկվայում, հետո՝ Երեւանում:

Գրող Սաթենիկ Մկրտչյանի խոսքով՝ Պարույր Սեւակը վառ գրող էր, որը ոչ միայն ինտելեկտուալ էր, այլեւ հոգի, սիրտ ու շունչ էր դնում իր գրականության մեջ: «Ինչպես հախուռն ստեղծեց իր գրականությունը, այդպես էլ գնաց: Չգիտեմ, թե ինչ պետք է ասել Սեւակի մասին, որ շատ քիչ չթվա»,-շեշտեց նա:

Հայաստանի գրողների միությունը Պոեզիայի միջազգային օրը, որը նշվում է մարտի 21-ին, նվիրելու է Պարույր Սեւակի հոբելյանին:

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բիէսթի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը. - Արարատի մարզ, համայնք Մասիս ք., 6-րդ թաղամաս, 2-րդ փողոց, 41 հասցեում գտնվող 101,15 քմ բնակելի տուն, 15,7 քմ /31,4 խմ/ պարիսպ եւ 0,04038 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 27200000 ՀՀ դրամ :

- Արարատի մարզ, համայնք Մասիս, Մասիս ք., 6-րդ թաղամասի 2-րդ փողոց, 38/1 հասցեում գտնվող 197,4 քմ բնակելի տուն եւ 0,0409 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 33380000 ՀՀ դրամ:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝ գույքերը գրավադրված են:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 12.02.2024թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 12.03.2024թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական: Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը:

Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am , www.borsa.am կայքերը:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի պաշտպան Ստյոպա Մկրտչյանն ամբողջական պայմանագիր է ստորագրել խորվաթական «Օսիեկ»-ի հետ:

Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը: Մկրտչյանը խորվաթական ակումբ էր տեղափոխվել «Արարատ-Արմենիա»-ից՝ վարձակալության հիմունքներով: Այժմ հայ պաշտպանն ամբողջական պայմանագիր է ստորագրել, որը նախատեսված է մինչեւ 2026 թվականը:

Մկրտչյանի տրանսֆերի համար «Օսիեկ»-ը վճարել է 500 հազար եվրո:

ԿԻՍԱԵԶՐԱՓԱԿՉՈՒՄ Է

Ռուս թենիսիստ, աշխարհի երրորդ ռակետ Դանիլ Մեդվեդեւը Ավստրալիայի բաց առաջնության (Australian Open) կիսաեզրափակիչում է:

Մելբուրնում ընթացող մրցաշարի տղամարդկանց մենախաղի քառորդ եզրափակչում Մեդվեդեւի մրցակիցն աշխարհի 9-րդ ռակետ, լեհ Հուբերտ Հուկաշն էր: 4 ժամ ձգված մրցախաղում Մեդվեդեւը հաղթեց 5 սեթերից հետո՝ 7:6, 2:6, 6:3, 5:7, 6:4:

Australian Open-ի տղամարդկանց եւ կանանց մենախաղերին մասնակցում են 128-ական թենիսիստներ: Մրցաշարի մրցանակային ֆոնդը կազմում է 58 միլիոն ԱՄՆ դոլար: Մրցաշարի գործող չեմպիոններն են Նովակ Ջոկովիչն ու Արինա Սոբոլենկոն: Այն կեզրափակվի հունվարի 28-ին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԿԼԻՆԵՆ

Երեւանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ 2024թ. ընթացքում միջազգային, քաղաքային ու երիտասարդական բազմաթիվ միջոցառումներ տեղի կունենան:

Համայնքը կարեւորել է նաեւ սահմանափակ կարողություններ ունեցող անձանց ներգրավումը մարզական կյանքին, կլինեն նաեւ տարբեր նախաձեռնություններ տարեցների ու Երեւանի փոքրիկ բնակիչների համար:

2024-ին Երեւանում նախատեսվում է անցկացնել տարբեր մարզաձեւերի 15 միջազգային մրցումներ:

ԱՌԱՋԱՐԿ Է ԱՐԵԼ

Սանկտ Պետերբուրգի «Զենիթն» առաջարկ է արել Հայաստանի ազգային հավաքականի եւ Մոսկվայի «Լոկոմոտիվի» պաշտպան Նաիր Թիկնիզյանին:

«Чемпионат»-ի համաձայն՝ ՌԴ չեմպիոնը 24-ամյա ֆուտբոլիստին առաջարկել է տարեկան 1,2 միլիոն եվրո աշխատավարձով պայմանագիր: Դա երկու անգամ ավելի է Թիկնիզյանին «Լոկոմոտիվում» տրվող աշխատավարձից:

Ընթացիկ մրցաշրջանում հայ պաշտպանը «Լոկոմոտիվի» կազմում բոլոր մրցաշարերում անցկացրել է 23 հանդիպում, դարձել 8 գոլի ու 5 գոլային փոխանցման հեղինակ: Transfermarkt-ը նրա տրանսֆերային արժեքը գնահատում է 7 միլիոն եվրո:

● *Փետրվարի 2-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Բարի լույս, հրեշտակներս» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1000-3000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ մրցութային հավասար միավորների դեպքում որ դիմորդներին է տրվում առավելություն:

Նարինե Մելքոնյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ մրցութային հավասար միավորների դեպքում, ըստ հերթականության, առավելություն է տրվում՝

1) բոլոր տարիների մեդալակիր դիմորդներին,

2) արվեստի գծով միջազգային եւ հանրապետական մրցույթների հաղթողներին,

3) դպրոցականների հանրապետական առարկայական օլիմպիադաների առաջին կարգի դիպլոմ ստացած դիմորդներին,

4) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության բուհերի առկա ուսուցմամբ տվյալ ուսումնական տարվա մասնագիտությունների եւ ընդունելության քննությունների ցանկում բուհի կողմից նշված առաջին մրցութային քննությունից առավել բարձր միավոր ստացած դիմորդներին,

5) դպրոցի պետական ավարտական քննություններից առավելագույն միջին գնահատական գնահատական ունեցող դիմորդներին,

6) տվյալ մասնագիտությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն ստացած դիմորդներին:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ համաձայն ընդունելության դիմում-հայտի՝ դիմորդը կարող է մասնակցել մեկ կամ մի քանի բուհերի՝ մինչեւ երկու անվճար եւ մինչեւ ութ վճարովի մասնագիտությունների մրցույթին՝ հանձնելով այդ մասնագիտությունների համար սահմանված բոլոր քննությունները:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք:

Երանուհի Հայրապետյանի (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ե. Հայրապետյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված՝ 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն (բաժին): Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու համար դիմումը ներկայացնում է ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձը անձամբ կամ օրինական ներկայացուցչի կամ լիազորագրի հիման վրա գործող ներկայացուցչի միջոցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

ArmLur.am-ին հայտնի է դարձել, որ երեկ առավոտյան Սուրբ Աննա եկեղեցու հարակից տարածքում արտակարգ դեպք է տեղի ունեցել: Ծառը շուռ է եկել եւ վնասել 3 ավտոմեքենա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 5 - 9 0 + 2
Կոտայքի լեռներ	- 6 - 8 - 1 - 4
Կոտայքի նախալեռներ	0 - 3 0 + 1
Գեղարքունիք	- 3 - 5 -2 - 4
Լոռի	- 8 - 13 -2 - 4
Տավուշ	- 2 - 5 - 2 + 1
Արագածոտնի լեռներ	- 0 - 3 -1 - 3
Արագածոտնի նախալեռներ	- 1 - 3 0 + 3

Արարատ	0 + 2 + 3 + 5
Արմավիր	- 1 - 3 + 2 + 5
Վայոց ձորի լեռներ	- 6 - 9 - 1 - 4
Վայոց ձորի նախալեռներ	- 2 - 4 + 2 + 4
Սյունիքի հովիտներ	- 2 - 4 + 1 + 3
Սյունիքի նախալեռներ	- 6 - 9 - 2 - 3
ԼՂՀ	- 4 - 8 - 2 - 4
Երեւան	- 6 - 8 + 3 + 5

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.1.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Դավթաշենական 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*